Հաստատում եմ

Դպրոցի տնօրեն / Է. Հարությունյան

<<ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 8 ՄԻՋՆ. ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԳԾՈՎ ՓՈԽՏՆՕՐԵՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

# ՊԼԱՆ

ՄԿԱ գծով փոխտնօրեն՝ Ն.Ստեփանյան

2023-2024

# ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄ

| | Բովանդակություն | Ժամկետ | Պատասխան ատու |
|---|---|---|---|
| 1 | Անցկացնել 4,5,6 տարեկան երեխաների հաշվառում դպրոցի սպասարկման տարածքում | ապրիլ | Տնօրենություն դասվարներ |
| 2 | Հնարավորության սահմաններում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ապահովել անվճար դասագրքերով և գրենական պիտույքներով | սեպտեմբեր | Տնօրենություն |
| 3 | Դժվար առաջադիմող աշակերտներին ըստ նրանց ընդունակություններին հետաքրքրությունների ընդգրկել համապատասխան դպրոցական խմբակներում, սեկցիաներում:Լրացուցիչ հանդիպումներով նպաստել նրանց առաջադիմությանը | սեպտեմբեր տարվա ընթացքում | ՄԿԱ գծով փոխտնօրեն դասղեկներ |
| 4 | Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ,կանխել դրանք,անհրաժեշտության դեպքում առաջնորդվել օրենքով սահմանված կարգով | Տարվա ընթացքում | Տնօրեն ՄԿԱ գծով փոխտնօրեն |
| 5 | Ուշադրության կենտրոնում պահել ետ մնացող աշակերտներին՝ բոլորի ընդգրկվածությունն ապահովելու դպրոցում | Տարվա ընթացքում | Տնօրենություն դասղեկներ |
| 6 | Պարտադիր ուսուցման գործընթացի իրականացմանը մասնակից դարձնել ծնողներին և դպրոցական խորհրդին | Տարվա ընթացքում | ՄԿԱ գծով փոխտնօրեն դասղեկներ |
| 7 | Կազմակերպել հանդիպումներ դեռահասների հարցերով զբաղվող ոստիկանության համապատասխան աշխատակիցների հետ | Տարվա ընթացքում | Տնօրեն ՄԿԱ գծով փոխտնօրեն |
| 8 | Խրախուսել , զարգացնել աշակերտների սեփական նախաձեռնությունները, խթանել ինքնավարության գործընթացը,նրանց լավագույն աշխատանքը տարածել փորձի փոխանակմամբ | Տարվա ընթացքում | ՄԿԱ գծով փոխտնօրեն դասղեկներ |

# ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Առանձնակի ուշադրություն դարձնել սովորողների գիտելիքներին ըստ պետական չափորոշիչների,նրանց առաջադիմության ու վարքին | Տարվա ընթացքում | Տնօրենություն ուսուցիչներ |
| 2 | Կարևորելով մասնագիտական կողմն որոշելու անհրաժեշտությունը , անցկացնել առարկայական միամսյակներ, որի ընթացքում հստակ ներկայացնել առարկայի իմացության կարևորությունն ու կիրառությունը կյանքում, կազմակերպելով՝<br>ա. ցերեկույթներ և բաց դասեր<br>բ. Լույս ընծայել պատի թերթեր և վահանակներ<br>գ. Հրավիրել մասնագետներ տարբեր հաստատություններից<br>դ. Այց համապատասխան աշխատավայրեր<br>ե. Անցկացնել ուսուցողական- դաստիարակչական բնույթի <<Գիտակների>> մրցույթ բոլոր առարկաներից | Տարվա ընթացքում | փոխտնօրեններ ուսուցիչներ |
| 3 | Հայտնաբերել օժտված երեխաներին՝ տալու առարկայական խոր և կայուն գիտելիքներ, մղել նրանց ստեղծագործական որոնողական աշխատանքների | Տարվա ընթացքում | ՄԿԱ գծով փոխտնօրեն ուսուցիչներ |
| 4 | Միջին և ավագ դպրոցում անցկացնել գիտագործնական կոնֆերանսներ աշակերտների և ուսուցիչների մասնակցությամբ | Տարվա ընթացքում | տնօրենություն |
| 5 | Մանկավարժահոգեբանական աշխատանքը նպատակաուղղել աշակերտներին հասարակական կյանքի մեջ ներգրավելու և նրանց մեջ սոցիալական պատասխանատվություն ձևավորելու նպատակով | Տարվա ընթացքում | տնօրենություն |

# ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ.ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Արդիականացնել ուսուցիչների հոգեբանա-մանկավարժական պատրաստվածությունը, նրանց աշխատանքն ուղղորդել պահպանելով հոգեկան անդորր և խաղաղություն աշակերտ-աշակերտ,ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում | Տարվա ընթացքում | ՄԿԱ գծով փոխտնօրեն դասղեկներ |
| 2 | Բաց դասերին մասնակից դարձնել դասղեկներին:Ապահովել նրանց մասնակցությունը կրթության ազգային ինստիտուտի,քաղաքային,մարզային կազմակերպությունների կողմից կազմակերպող սեմինար պարապմունքներին,այլ հանդիպումներին | Տարվա ընթացքում | ՄԿԱ գծով փոխտնօրեն դասղեկներ |
| 3 | Դասղեկների աշխատանքները կատարելագործելու նպատակով դպրոցում ստեղծել 1-4, 5-9,10-12 դասարանների միավորումներ:Դասղեկական պլանները ներկայացնել հաստատման նշված ժամկետում | սեպտեմբեր | ՄԿԱ գծով փոխտնօրեն դասղեկներ |
| 4 | Պարբերաբար կազմակերպել դասղեկական ժամերի բաց դասեր՝ հետևելով թեմատիկային | սեպտեմբեր ամսվա ընթացքում | ՄԿԱ գծով փոխտնօրեն դասղեկներ |
| 5 | Ակտիվացնել,բարձր հիմքերի վրա դնել արտադասարանական,արտադպրոցական աշխատանքները:Բարձր դասարաններում կազմակերպել բանավեճեր,կլոր սեղաններ | տարվա ընթացքում | ՄԿԱ գծով փոխտնօրեն դասղեկներ |
| 6 | Անցկացնել համադպրոցական ծնողական ժողովներ , կատարել աշխատանք ծնողների , ծնողկոմիտեների հետ | տարվա ընթացքում | տնօրենություն |

## ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

| | | | |
|---|---|---|---|
| | .ստուգել աշակերտական օրագրերի և տետրերի վիճակը | Տարվա ընթացքում | Տնօրենություն դասղեկներ |
| | .ուսումնասիրել դասղեկի կատարած աշխատանքը:Արդյունքները քննարկել դասղեկների խորհրդակցությունում,տնօրենությանը ներկայացված նիստում | Տարվա ընթացքում | տնօրենություն |
| | .սահմանել ուսուցչական անձնակազմի հերթապահությունը,կազմել գրաֆիկը, հետևել նրանց անխախտ կատարմանը | սեպտեմբեր տարվա ընթացքում | տնօրենություն |
| | .ընդլայնելով աշակերտական խորհրդի գործնեության շրջանակները,խրախուսել և կյանքի կոչել այն | Տարվա ընթացքում | ՄԿԱ գծով փոխտնօրեն Աև նախագահ |
| | .կազմել տարվա միջոցառումների օրացուցային պլան | սեպտեմբեր | ՄԿԱգծով փոխտնօրեն |

## ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

| | | | |
|---|---|---|---|
| | .կազմել ծնող խորհրդի աշխատանքային պլան<br>.հրավիրել ծնողական ժողովներ | սեպտեմբեր տարվա ընթացքում | տնօրենություն |
| | .ծնողներին մասնակից դարձնել աշակերտների արտադպրոցական դաստիարակչական աշխատանքներին | Տարվա ընթացքում | տնօրենություն |
| | .երեխայի պատվի և արժանապատվության իրավունքն ապահովելու նպատակով կազմակերպել սեմինար պարապմունքներ ուսուցիչների և ծնողների հետ | Տարվա ընթացքում | տնօրենություն ծնողկոմիտե |
| | .պարբերաբար հրավիրել ծնողկոմիտեի նիստեր `իրազեկել ու համադպրոցական , դասղեկական աշխատանքներին | Տարվա ընթացքում | տնօրենություն ծնողկոմիտե |
| | | | |
| | | | |
| | | | |